



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«08» 08 2018 թ.

No 06/3-1/46038-18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍԶՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Տ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 05.05.2018թ թիվ Պ-27 գրության
առցանց համար՝ A7A6-4DEC-E95C

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 106-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ շահութահարկով հարկման բազան որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, երբ օրենսգրքի նույն բաժնով և օրենսգրքի ընդհանուր մասով դրանց կիրառության առանձնահատկությունները սահմանված չեն:

ՀՀ կառավարության 11.03.2010թ. «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին» N235-Ն որոշմամբ հաստատված 16՝ «Հիմնական միջոցներ» հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի 55-րդ կետի համաձայն՝ ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն՝ երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է

դեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Մաշվածության հաշվարկը չի դադարում այն դեպքում, երբ ակտիվը գտնվում է պարապուրդի մեջ կամ հանվում է ակտիվ օգտագործումից, բացառությամբ եթե ակտիվը ամբողջությամբ մաշեցվել է:

Օրենսգրքի 121-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվում են ամորտիզացիայի ենթակա, սեփականության իրավունքով ռեզիդենտ շահութահարկ վճարողին պատկանող կամ ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով) ստացված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը: Նույն մասի 6-րդ կետի «դ» ենթակետի իմաստով՝ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացման ենթակա դառնալու և (կամ) ամորտիզացման ենթակա համարվելուց դադարելու դեպքում այդ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գծով ծախսերը կապարվում են դրանց ամորտիզացման օրվանից մինչև դրանց ամորտիզացման ենթակա համարվելուց դադարելու օրը՝ նույն ենթակետով սահմանված դեպքում և կարգով:

- 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի որոշման նպատակով՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են այդ ապրանքների մատակարարմանը, աշխատանքների կատարմանը և (կամ) ծառայությունների մատուցմանը համամասնորեն:

Օրենսգրքի 53-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն որևէ օրվանից սկսած՝ որոշակի ժամկետով գործունեությունը դադարեցնելու մասին, ապա հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը դադարեցնելու օրվանից (բայց ոչ շուտ, քան գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարության ներկայացման օրը) մինչև հայտարարության մեջ նշված՝ գործունեությունը վերսկսելու օրը ընկած ժամանակահատվածում ներառվող՝ որևէ հարկատեսակի կամ վճարի համար Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված ամբողջական հաշվետու ժամանակաշրջանների համար հարկ վճարողը հարկային մարմին հարկային հաշվարկներ (այդ թվում՝ «գրոյական») չի ներկայացնում, բացառությամբ նույն հոդվածի 9-րդ մասով սահմանված հարկային հաշվարկների:

Նույն հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի 8-րդ մասի կիրառության իմաստով գործունեության վերսկսում չի համարվում վարչական ծախսերի կապարումը, այդ թվում՝ վարձակալական վճարների կամ տոկոսների վճարումը կամ բաժանորդագրային հիմունքներով ստացվող ծառայությունների (մասնավորա-

պես, հանրային ծառայությունների կամ կոմունալ ծառայությունների կամ համա-
կարգչային ծրագրերից, տվյալների բազաներից, արտոնագրերից, լիցենզիաներից,
ծանուցումներից, թույլտվություններից, առևտրային նշաններից, ապրանքային նշան-
ներից, հեղինակային իրավունքներից և համանման այլ իրավունքներից օգտվելու ծա-
ռայությունների) համար վճարումը, որի դեպքում հարկ վճարողը հարկային մարմին է
ներկայացնում նույն կետում նշված ծախսերի հայտարարագրման համար անհրաժեշտ՝
Օրենսգրքով սահմանված հարկային հաշվարկները:

Հաշվի առնելով վերոգրյալ կարգավորումները՝ հայտնում ենք, որ եթե հիմնական
միջոցները մատչելի են օգտագործման համար, այսինքն գտնվում են այնպիսի վայրում
և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով օգտագոր-
ծելու համար, ապա այդ հիմնական միջոցի գծով հաշվարկված ամորտիզացիոն մաս-
հանումները ենթակա են նվազեցման համախառն եկամտից: Եթե հիմնական միջոց-
ները արտադրական կամ այլ առևտրային նշանակության են, ապա դրանց մասով հաշ-
վարկված ամորտիզացիոն մասհանումների չափով համախառն եկամտից նվազեցում-
ները կատարվում են արտադրանքի, ապրանքների կամ ծառայությունների իրացմանը
համամասնորեն:

Ինչ վերաբերում է գործունեության դադարեցման ժամանակահատվածում կազ-
մակերպության կողմից կատարված վարչական ծախսերին, ապա Օրենսգրքի 53-րդ
հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետին համապատասխան՝ այդ ծախսերը համախառն
եկամտից նվազեցվում են այն հաշվետու տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում
են:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 8/9/2018 16:42:37 GMT+4

Подписано: MANUKYAN ARTUR 3801690067

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատ.՝ ՎՄԸՍՎ հարկերի և պարտադիր վճարների
Մեթոդաբանության թիվ 2 բաժին, հեռ. 060544779